

գոր կը գնենք հոս բաղդատելով արդի ապակեոյ բաղդադրութեան հետ .

| Բաղդադրութիւն պատուհանի ապակեոյ Պոմպէայի . | Արդի պատուհանաց |
|--------------------------------------------|-----------------|
| Գայլախազածին . . . 69, 43                  | 69, 6           |
| Կիր . . . . . 7, 24                        | 13, 4           |
| Նատրոն . . . . . 18, 24                    | 15, 2           |
| Պաղիեղածին . . . . 3, 55                   | 1, 8            |
| Թթուուկ երկաթոյ . 1, 15                    |                 |
| — մագնանի . 0, 39                          |                 |
| Պղինձ                                      | Քիչ մը          |
| 100 »                                      | 100 »           |

Ինչպէս որ կը տեսնուի այս երկու համեմատութեանց մէջ քիչ տարբերութիւն կայ գայլախազածին և մէկալ գլխաւոր մարմնոց մէջ :

Հռովմէական ապակիներուն մէջ նշանաւոր բանն ալ այս է որ ապակիները կարգ կարգ շինուած են և տարբեր գոյներով : Վրայի եղած նկարքն այնպիսի գոյն մը ունին որով գուրս կը յատկեն յատակի վրայ եղած գունին մէջ : Այս տեսակ ապակիներէն քիչ կտորներ ունինք, բայց գտնուած կտորները յայտնի կը վկայեն թէ ինչպէս առաջ գացեր էին արուեստին մէջ հին խաւիոյ ապակեգործները :

Երբոր Յուլիոս Կեսարու ատեն տիրեցին Հռովմայեցիք Գաղղիոյ, այն կողմերը մոտցուցին իրենց արուեստներն ալ, մանաւանդ ապակեգործութիւնը : Այս պատճառաւ է որ գաղղիական-հռովմայեցի գերեզմանաց մէջ գտնուած ապակիէ անօթները ըստ ամենայնի կը նմանին հռովմէական արուեստին : Գլխաւորապէս նուած ամաններուն մէջ նշանաւորն է Ստրասպուրկի ապակեայ անօթը, որ 1825ին գտնուեցաւ, և էր Մաքսիմիա, նոսի Հերակլեսի, որ Գաղղիոյ մէջ անցուց իր կենաց վերջի տարիները : Նոյնը կրնանք բռնել նաև Սպանիոյ մէջ գտնուած ապակեայ անօթոց համար, ուրոնց վրայ գրուած են հռովմէական արուեստին տեսակը :

Չենք կրնար հաւաստել թէ Յունաց մէջ ինչ աստիճանի այս արուեստը առաջ գացած էր, որովհետև յոյն հեղինակները բան մը չեն յիշատակեր : Բայց յայտնի է որ Հռովմայ մէջ ծաղկած ատեն Յունաց մէջ ալ ծաղկած էր, և Հռովմայ կայսրութեան ինչապէս ետև Յոյնք պահեցին այս արուեստը, և շուտով կղզին անուանի էր ապակեգործութեան մէջ :

## ՊԵՂՄՈՒՆՔ Ի ՄԻԿԷՆՍ

Միկէնք՝ յունական առասպելախառն պատմութեան վերաբերեալ քաղաք մը պիտի համարուէր, եթէ իրեն մինչև մեր օրերը մնացած աւերակներն՝ դեռ ևս հաւաստի չընծայէին մեզի իր ատենուան մը գոյութիւնը : Այս քաղաքի պատմութիւնն զիւրապանց դարերէն կը սկսի, և կը վախճանի Յունաց պատմական գործուն սկզբնաւորմամբն : Ըստ աւանդութեան հիմնեալ 'ի Պերսէոսէ՝ Տրոյիոյ պատերազմին ժամանակ առաջին զօրաւոր քաղաքն էր, բարգաւաճն Արգոյիսի մէջ մայրաքաղաք Ագամեմնոնի Արքայից Արքային : Բայց յետ Հերա-

կլեանց յԱրգոս վերադառնալուն՝ քիչ ատենուան մէջ կորսնցուց բոլորովին իր պայծառութիւնն, և 'ի պատմեցաց միայն Մարական պատերազմին ժամանակ Արգիսացոցմէ հիմնովին կործանման պատմութիւնը կը յիշուի . և թեև յաւիտենական լուսութեան մը մէջ թաղեալ պիտի մնար իր յիշատակը, եթէ հոմերոսէն կամ լաւ ևս ըսելով հոմերոսպաշտն Հենրիկոս Շլիման՝ բարեբաղդ ձեռնարկութեամբ մը չուզէր կրկին անգամ իր սիրած հանճարն, ըզմեծ քերթողահայրն, յաղթական հանդիսացնել 'ի պատմութեան ընդդէմ

անոր անիրաւող և գոյութիւնն ուրա-  
ցող սկեպտական դիտնականաց : Շլի-  
ման ուզեց փորձառական մեկնիչ ըլ-  
լալ Հոմերոսի տողերուն , և արդէն քա-  
ջալերեալ Տրոյական պեղմանց յալողակ  
եղբէն՝ ձեռք զարկաւ Միկէնքի պեղ-  
մանց՝ Հոմերի իրիականին սքանչելի  
մեկնութիւնն ամբողջացընելու համար ,  
դեռ ևս իդակէի մէջ Ողիսականին մեկ-  
նութեան չանցած <sup>1</sup> :

Շլիմանի բրած այս պեղմունքն , սկը-  
սեալ յՕգոստոսի 1876 ամին , մեծ յուզ-  
մունք պատճառեց Եւրոպայի մէջ : Նը-  
կատմամբ հեղինական նախնի արուես-  
տին պատմութեանն թերման Շլիմանի  
գիւտը՝ մեր դարուն մէջ եղած առաջին  
մեծ գիտն կրնայ համարուիլ : Պեղ-  
մունքն սկսաւ նախ քաղբին կիկլոպեան  
յիշատակարանաց մէջ , հասարակօրէն  
Գաւնձք Ատրեւայ անուանեալ , յորում  
ուրիշ բան չը գտնուեցաւ բայց եթէ  
քանի մը ամենահին անօթներու խե-  
ցիք , բիւրեղեայ մեհանդներ , զարդե-  
րու կտորուանք և ճերմակ ու երկնա-  
դոյն կճնայ սինականներ : Յետոյ երբ Ա-  
կրոպոլիս կամ Բուն Միկէնաբերդին մէջ  
սկսան պեղմունք , քանի մը օրումն մէջ  
գտնուեցաւ Առիւծուց դուռն , որուն  
ետեի կողմն քանի մը քայլ հեռի՝ եր-  
կորոգ դուռն մ'ալ գտնուեցաւ առաջ-  
նոյն հետ սրահակով մը միացեալ : Սրա-  
հակին պատերէն մէկուն վրայ մէկ ու  
կէս մեզր ընդարձակութեամբ խորշ մը  
կը գտնուի , զոր Շլիման դռնապահին  
տեղն համարեցաւ : Միկէնաբերդին մէջ  
եղած պեղմունքն յառաջ տանելով՝ գը-  
տնուեցաւ ամբողջ կարգ մը՝ անօթից ,  
մետաղեայ տախտակներու և երկա-  
թեայ գործեաց կտորներով և մակդո-  
նական դարուն դրամներէ ձևացած ,  
յայտնի և անփառելի ապացոյց , ընդ-  
հանուր եղած կարծեաց հակառակ ,  
թէ Միկէնք Արգիւացուցմէ կործանուե-  
լէն վերջը՝ կրկին նորոգուեցաւ և բնա-

կուեցաւ : Դարձեալ քանի մը քայլ  
խորութեամբ գտնուեցան հազարաւոր  
հին անօթներու կտորուանք , թրծեալ  
կաւէ յինուած կովու և կամ բուռյ գը-  
լուններով կուռք , պղնձեայ բանալի-  
ներ և դանակներ : Դեռ աւելի խորու-  
թեամբ , յետ միակերպ աշխատելու ամ-  
բողջ ամիս մը՝ Շլիմանի 125 գործաւոր-  
ներն հանդիպեցան պատմական ժա-  
մանակէն առաջ գտնուող դարուց մէջ  
չինուած տներու , յրմուղներու և վեր-  
ջապէս բոլորչի հրապարակած և տեղոյ  
մը՝ շրջապատեալ կրկնակարգ քարա-  
պատնիշով . այս քարերէն ոմանք սալա-  
քարներով արձուանալ բարձրացած են :  
Շլիման կը համարի իրաւացի կերպով  
որ այս բոլորչի տեղս նստարաններով  
շրջապատեալ Միկէնքի հին ատենն  
ըլլայ , ուր Հոմերոսի պատմած ծերա-  
կուտին խորհուրդները կը խմբուէին :

Պատմական ժամանակէն առաջ հիմ-  
նուած քաղաքի թաղի մը , հոմերապա-  
տում ատենի մը և կրկին ամրոցադրանց  
գիւտը՝ և վերջապէս Միկէնքի Արգիւ-  
ացուցմէ կրած աւերմանէն վերջը կրկին  
անգամ բնակուելուն անհերքելի ապա-  
ցոյցը՝ որ և իցէ հնախուրդի մը հետա-  
քըրքրութիւնը յագեցընող առարկա-  
ներ էին , բայց ոչ և Շլիմանի համար ,  
որուն փափագը դեռ շատ աւելի բար-  
ձրագոյն նպատակ մ'ունէր : Ինքը փոքր  
Ասիոյ անապատ դաշտավայրի մը մէջ  
կենդանացուց Տրոյիոյ աւերակները ,  
որուն գոյութիւնը գիտնականաց ամ-  
բողջ դասէ մը առասպելաց կարգին մէջ  
գրուած էր : Միկէնքի ատենի մը գիւ-  
տը չէր կրնար ուրեմն յագեցընել այն  
հնախոյրդ՝ որոյ պարծանքն եղեր էր  
Պրիամու զանձուն գիւտը , չէր կրնար  
վերջ տալ նաև Միկէնքի պեղմանցը  
առանց գտնելու Ալամմնոնի չիրիմը ,  
որ ըստ Պաւսանեայ պատմութեան , իր  
ընկերակցօք բերդաքաղաքին մէջ թա-  
ղուած է :

Պատնիշապատին մէջ բրած պեղ-  
մունքը շարունակելով՝ քանդակեալ  
ամենայարգի քարերու հանդիպեցան ,  
որոնց վրայ կը տեսնուէին մարտիկը ,

<sup>1</sup> Շլիման Միտլ Էռնի նաև իգակէի մէջ ալ  
պեղմունք ընելու , և այս ձեռնարկութեան  
պատճառաւ անցեալ տարի Օգոստոսի մէջ այց  
ելել էր այն կղզոյն :

որսորդք, կենդանիք և պարուրածն ու  
 ոլորտապտոյտ զարդեր : Այս քան-  
 ղակաց ոճը ժամանակակից կերևի  
 բերդաքաղաքին դրան վրայ գտնուած  
 առիժներուն : Յետոյ քիչ հեռու եօթն  
 ու կէս մեդր խորութեամբ գտնուեցան  
 քովէ քով հինգ գերեզման, որոց մէջ  
 տասնհինգ անձանց դիակուներ կային .  
 երեքը իրենց ոսկերաց և ակռաներուն  
 չափէն և քովերին գտնուած զարդե-  
 րէն խմացուեցան որ կանանց դիա-  
 կուներ էին : Այս տասնհինգ կմախքն,  
 որոնք խճեայ կարգի մը վրայ էին հանգ-  
 չեցուած՝ անկատար կերպով աճիւնա-  
 ցած էին, ինչպէս յայտնի կ'երևի մնա-  
 ցած մոխիրներէն և կրակին խճերուն  
 վրայ թողած հետքէն : Այս դիակնե-  
 րէն մէկն մասնաւոր կերպով իրեն  
 դրակեց Շիւմանի ուշադրութիւնն .  
 բարձրահասակ անձի մը դիակն կ'ե-  
 րէր, առաջին գերեզմանին մէջ . դըւ-  
 խոյն միսը և՛ անհարթութիւնները դեռ  
 ևս պահուած էին, աչուրները ամենա-  
 որոշ կը զանազանուէին, կիսաբաց բեր-  
 նին մէջ 32 գեղեցիկ ատամուներ կը  
 փայլէին : Չոյլ ոսկիէ զրահով մը  
 կուրծքը պատած էր, վրան պարուրա-  
 ձև զարդերով զծագրուած : Ոսկեայ  
 լայն գոտիէն կախուած էր պղնձեայ  
 երկաայրի սուր մը, ոսկիապատ պղզն-  
 ձեայ դաստակով և ոսկեայ թիթեղէ  
 կապարանով մը : Ոտիցը կողմն ուրիշ  
 յարդի իրաց հոտ տասնըմէկ պղնձեայ  
 սուրբը ալ կը գտնուէին : Երեսը ոսկե-  
 դէն դիմակով մը զոցուած էր, որուն  
 վրայ պատկերացեալ էր անձի մը  
 դէմքը, թաւամօրուս, ուղղաթիթ, բա-  
 րակաշուրթն, կզակը և ծնօտները  
 դուրս ցրցուեալ : — Արդեօք Ագամեմ-  
 նոնի դիակն էր . արդեօք այն դիմակին  
 վրայի գծագրութիւնք իր երևանի զը-  
 ծագրութիւնքն կը ներկայացնէին :  
 Շիւման գրեթէ կը հաւատայ, իսկ  
 կլէտսդոն բնաւ չի տարակուսիր :

Ոչ միայն այս Ագամեմնոնի կարծե-

ցեալ դիակին երեսը ոսկեայ դիմակով  
 զոցուած էր, այլ նոյն գերեզմանաց  
 մէջ գտնուեցան նաև ուրիշ վեց դի-  
 մակներ ալ նոյն մետաղէն և նոյն ա-  
 րուեստով շինուած, բայց իւրաքան-  
 չիւրն այլևայլ գծագրութեամբ դէմք  
 կը ներկայացնէին : Մէկուն վրայ ներ-  
 կայացուած պատկերին երեսը ձուա-  
 ձև է, ճակատը շատ լաւ չափակցեալ,  
 քիթն յունական, բերանն փոքր, շըր-  
 թուներն բարակ . ուրիշի մը վրայ երեսը  
 կլորակ է, այտերը լիցուն, ճակատը  
 վայրէջ, քիթը ճակտին ուղղութեան  
 վրայ չէ և շրթուներն ստուար . երրորդի  
 մը վրայ ճակատն ընդարձակ է, բեր-  
 նին մեծութիւնը ամենին համեմատ  
 չէ շրթանց կարգէ դուրս բարակու-  
 թեանը և բերնին վերեւը ձևացած սառ-  
 տիկ խորշմները շատ տարիք ունեցող  
 անձի մը պատկերը կը նշանակեն : Այս  
 դէմքերէն ոմանք մօրուաւոր են և աչ-  
 քերնին բաց, ոմանք ալ անմօրուս  
 և աչուրնին գոց : Այս տարբերու-  
 թիւններէն յայտնի կ'երևի որ Մի-  
 կէնքի դիմակաց վրայ նկարագրուած  
 դէմքերը զաղափարական պատկերներ  
 չեն, այլ նոյն իսկ մեռելոց գծագրու-  
 թիւնքն ըլլան : Ի բաց առեալ այս դի-  
 մակաց պատճառած հետաքրքրու-  
 թիւնն, որոնք թերևս ցուցնել կ'ուզեն  
 մեզի դիւցազարմ քաջաց գծագրու-  
 թիւնքն և նկարագիրը, ուրիշ կողմանէ  
 մեծ յարգ ունին արուեստական ուս-  
 մանց նկատմամբ :

Գտնուած տասնհինգ կմախքն, ըստ  
 Շիւմանի բացատրութեան ստուգապէս  
 ոսկեղէն կոյտի մը տակ թաղուած էին :  
 Գերեզմաններէն մէկուն մէջ միայն,  
 զոհարեղէններէն և անօթներէն զատ՝  
 կային նաև 701 ոսկեայ թիթեղներ,  
 թագեր, պսակներ, ճարմանդներ, ա-  
 նօթներ, սրուակներ, մատանիներ,  
 կամարներու և գօտեաց կտորուանք :  
 Այս ամեն առարկայք, որոնց իւրա-  
 քանչիւրն մանրամասն նկարագրուելու  
 արժանի է, ամենափափուկ քանդա-  
 կեալ կամ փորագրեալ զարդեր ունին  
 վրանին : Դարձեալ այս առարկայից

1 Ըստ կարծեաց բօշկաց որոնք քննեցին այն  
 ատամուները մեռեալը 35 տարեկանէն աւելի ե-  
 ղած պիտի չըլլայ :

մէջ կային նաև ոսկեղէն բաժակ մը չորս յիսրէ ծանրութեամբ, եղիպտական յախճապակեայ առարկաներ, հարկաւոր տարանկիւնաձև ոսկրէ ճարմանդներ՝ քանդակեալ ոսկեայ թիթեղով պատեալ. ոսկի անօթ մը որուն ունկուկը երկու շանց զլուխ կը ներկայացընեն : ամենազեղեցիկ կովուզլուխ մը՝ ձոյլ արծըթէ, եղիւրները միայն ոսկիէ. կրկին տակ ունեցող ոսկեղէն բաժակ մը, որուն ձևը և զարդերը նկարագրեալ են Հոմերոսի իլիադէ կտիւն մէջ<sup>1</sup>. հրաշալի ոսկեայ պսակ մը, զլուխ գործոց՝ ոսկերչական արուեստին : այլ և այլ ոսկեղէն զարդեր՝ որոնց վրայ ամենաքնական կերպով ձևացուած են ընկողմնեալ առիւծներ, արծուառիւծ մը թռչելու գրից մէջ, կրկին զլուխ ունեցող արծիւներ, կարապներ և պոլիպոդներ՝ իրենց ութ տարածուած բաղիկներովն : Դարձեալ հազարէն աւելի բարակ և կլորակ ոսկիէ թիթեղներ, ընդ մէջ վեց և եօթը տասնորդամեղր տրամագծով, որոնք զարդարեալ են համակերօն պարուրած և ոլորտապտոյտ չըջանակներու, թիթեղներու, տերևներու պատկերներով : Ձնեւելով այն հետաքրքրական կնքաւոր մատանիներն իրենց մանրաքանդակներն որսի կամ պատերազմի կենդանի և վառվրուն տեսարաններ կ'ընծային. նոյնպէս նաև հին մեհէնի մը ձոյլ ոսկիէ փոքրիկ նախատիպ մը, որ քառակուսի աշտարակազարդ շինուածք մ'է և ոսկերչին գրոյմած հորիզոնական քանի մը գծերն քարերուն դիրքը կը ցուցընեն, յէնքին անկիւնները երկու աղաւնիներ գրոյմուած են : Միկէնքի պեղմունքը գլխաւորապէս երկու մեծամեծ խնդիր կը յարուցանեն : Առաջին և աւելի մտադրութեան

արժանի խնդիրն է նկատմամբ արուեստից : Ամենաստոյգ բան է որ Յոյնք ամենահին ժամանակ ևս արուեստից մէջ կենդանութեան և խօսունութեան կրկին գլխաւոր կատարելութեամբք այնպիսի զարգացեալ վիճակի հասեր էին, որ հազար տարի վերջը, Պերսիկէսի ժամանակ, բարձրացընէին պիտի յունական արուեստը 'ի գերագոյն կէտ մեծութեան և կատարելութեան : Միկէնքի բաժակները, քանդակները, զարդերը, դիմակները այս նկատմամբ սքանչելի հաւաստիք են : Անտարակուսելի պէտք է համարել որ այն նախնական արուեստն Յոյնք յեզիպտոսէ կամ յԱսորեստանէ ստացած ըլլան, որոնք այն ժամանակը իրենց քաղաքական անկման վիճակին մէջ կը գտնուէին : Բայց Հելլենք այն արուեստին նոր կերպարանափոխութիւն, նոր յեղափոխութիւն և նոր կեանք մը տուած էին, կենդանութիւն և շարժում տալով եզիպտացոյց և Ասորեստանայց անխօս և անկենդան գծագրութեանց :

Երկրորդ խնդիրն, որ աւելի հասարակաց հետաքրքրութեան նիւթ եղաւ՝ պատմական կամ թէ դիցաբանական է. այսինքն՝ թէ արդեօք Շիլմանի գտած այն տասնհինգ կմախքն, իրաւքնէ իրեն կարծածին համեմատ Ագամեմնոնի, Կասսանդրեայ, Էլրիմեդոնի և Ատրեսոյց արքային միւս ընկերացը դիակունքն են, որոնց հետ Տրոյիոյ արշաւանքէն ետ դարձաւ : Եւ յուրեքն առաջ պէտք է հաւաստել Ագամեմնոնի գոյութիւնը և Միկէնքի եղբորական արկածից ստուգութիւնը. և այս նախնական ապացուցութիւնս միայն թերևս ամբողջ հատորի մը կարօտի :

Բայց իլիականի պատմութեան ստուգութիւնն հաւաստի համարելով՝ տեսնանք թէ Շիլման իր կարծիքը հաստատելու համար ինչ ապացոյցներ մէջ կը բերէ, և թէ ինչ են իրեն հակառակորդաց ըրած առարկութիւնքն :

1 Եւ զբաժակըն չըքնաղ՝ զոր 'ի տանէն ամ ծերունին  
Ըզեքտունն ոսկեպալար, որում չորեք էին  
ունկունք,  
Եւ կրկին ըզմն միով իւրաքանչիւր շուրջանակի  
Աղաւնեակք քարակէին և կրկին տակք  
կին ներքուստ : ԺԱ. 634-637 :

Միկէնքի հոմերապատում համա-  
նուն քաղաքին հետ նոյն ըլլալն յայտնի  
է, վասն զի Հոմերոս անոր գիրքը կը  
նշանակէ Արգոսի դաշտավայրին մէջ,  
և քարեշէն դաստակերտ, սիրեցեալ  
'ի Հերայ և ոսկեձոխ մակդիրները կու-  
տայ անոր: Արգ Միկէնք՝ որոյ պա-  
րիսպքն գեռ ևս կանգուն կեցած են՝  
հարկ է որ իրաւցնէ քարեշէն քաղաք  
մը եղած ըլլայ: Պեղեալ գերեզմանաց  
մէջ Հերայի շատ մը արձանիկները զըտ-  
նուեցան, վերջապէս այս ոսկեձոխ քա-  
ղաքին հինգ գերեզմանաց մէջ միայն  
գտնուած ոսկիէ առարկայից մետաղա-  
կան ծանրութիւնն աւելի կը կշռէ քան  
125000 ֆրանքաց: Գտնուած ոսկիէ ա-  
ռարկայից բազմութիւնն, արքունի գա-  
ւաղանները, զէնքերը թագերը և վերջա-  
պէս աստուածոց տաճարին քով, միջնա-  
բերդին վրայ՝ հասարակաց տաճարին մէջ  
թաղուած ըլլալին՝ բաւական զորաւոր  
փաստ մը կը կազմեն թէ այն գտնուած  
դիակունք թագաւորաց և մեծ իշխա-  
նաց ըլլան: Թաղուած տեղերուն ամե-  
նածիշդ այն տեղն է ուր Պաւսանիոս  
յաւանդութենէ առեալ կը նշանակէ Ա-  
գամեմնոնի, իրեն ընկերացը և կաս-  
սանդրեսի գերեզմանները. երեք կա-  
նանց դիակունքն՝ կրնան ըլլալ մին կաս-  
սանդրեսի և երկուքը գերեալ կրկին  
տրոփուհեաց: Դարձեալ շատ զարմա-  
նայի է Միկէնքի մէջ գտնուած բազ-  
մաթիւ իրաց՝ ինչպէս են զէնք, զար-  
դեր, անթոններ, և այլն, Հոմերոսի մէջ  
նկարագրուած նոյն տեսակ իրաց հետ  
ոճեցած նմանութիւնն, նոյնպէս նաև  
Հիսարթըքի (Տրոյիոյ) մէջ գտնուած քա-  
նի մը հնութեանց հետ: Վերջապէս Մի-  
կէնքի մէջ ոսկերչութեան արուեստը  
շատ զարգացած կը տեսնուի, և Հոմե-  
րոսի մէջ նկարագրեալ արուեստական  
հռչակաւոր առարկաներն՝ ոսկերչու-  
թեան կը վերաբերին, ինչպէս են Ա-  
քիլլեսի վահանն, Նեստորի բաժակը,  
զէնք, զարդք, և այլն:

Ասոնք են ահաւասիկ Շլիմանի հա-  
ւաստիքը. լոնք հիմա հակառակորդաց  
գլխաւոր առարկութիւնքն:

Ոչ Հոմերոսի և ոչ ուրիշ որ և իյե-  
յոյն մատենագրի մը մէջ դամբանական  
ոսկիէ դիմալներու յիշատակութիւն  
կ'ըլլուի: Դարձեալ իրականին մէջ եր-  
կու երեք անգամ երկաթի վրայ կը խօ-  
սուի, և ինչպէս Հիսարթըքի նոյնպէս  
նաև Միկէնքի մէջ ամենևին երկրթէ  
առարկայ մը չը գտնուեցաւ:

Այս առարկութեանց Շլիման կրնայ  
պատասխանել որ հոմերական երգոց  
թուականն, ինչպէս տրոյական պատե-  
րազմին թուականն, բոլորովին ենթա-  
գրական է. և այս երկու թուականներն  
թերեւս մէկմէկէ ժամանակի երկայն  
միջոցի մը հեռաւորութիւնն ունենան,  
սովորաբար կարծուածին հակառակ.  
որով Հոմերոս կրնար իրմէն շատ առաջ  
դամբանական զարդու մը գործածու-  
թիւնն անդիտանալ: Դարձեալ Հոմե-  
րոս երկաթի դարուն սկիզբները ապրե-  
լով՝ կրնայ այս մետաղիս գործածու-  
թիւնը տրոյական պատերազմին ժա-  
մանակակցաց ընծայած ըլլալ, մինչդեռ  
այն ժամանակ՝ դեռ ևս պղնձէ գարուն  
մէջ էին: Նոյնպէս կրնայ ըսել որ երկա-  
թը ժանդարմութիւն մնալի և բոլորովին ալ  
սպառի, մինչդեռ ոսկին և պղինձը դի-  
մացկուն ըլլալով՝ անմաշ կը մնան:

Համառօտելով՝ խնդիրն հետեւեալ վի-  
ճակին կը վերածուի: Եթէ ստոյգ հա-  
մարուի Ագամեմնոնի պատմութիւնը՝  
բաւական հաստատուն ապացոյցներ  
կան հաւտալու թէ Շլիմանի գտած գե-  
րեզմանն և դիակն Ագամեմնոնի ըլլայ,  
մինչդեռ 'ի հակառակէն բնաւ հաստա-  
տուն փաստ մը չըկայ, որ կարենայ  
տարակուսի ենթարկելու զայն: Բայց  
այս խնդիրս հետեւեալ մ'է նախնա-  
կան գրեթէ անլուծանելի խնդրոյն, և  
իր ստուգութիւնն անկից կախումն ու-  
նի, այսինքն է նոյն իսկ Ագամեմնոնի  
գոյութիւնը:

Բայց ստոյգ և աւելի մտազորութեան  
արժանաւոր նիւթն այն է՝ թէ Միկէն-  
քի մէջ գտնուած առարկաներն ան-  
տարակոյս ժամանակակից են, եթէ ա-  
ւելի ևս հնագոյն չըլլան, Տրոյիոյ պատե-  
րազմին, և հարկ է գտնեալ 1500 տարի

առաջ դնել զանոնք քան զթուականն Գրիստոսի : Այս առարկաներն յայտնի կ'ընեն նախնի Հիլենաց պանչելի յաջողակութիւնն որ ունէին ոսկւոյ վրայ բանելու , ամենակատարեալ վայելութեամբ և մեծ յոյս տուող հետեւողական հանճարով , որոնց իշխականին մէջ եղած քանի մը նկարագրութեամբն հանգերձ՝ մինչև ցայսօր հաստատապէս հաւատք ընծայող մը չէր գտնուած , և հնազանդութիւնն անգամ չէր կրնար երազել այսպիսի գիւտ մը :

Այս է ահաւասիկ Միկէէնքի պեղմանց մեծ և հոյակապ արդիւնքը , և Շլիմանի ձեռնարկը : Այս արդիւնքս անտարակոյս Ագամեմնոնի շիրմին գիւտէն աւելի մեծ է : Սակայն միւս կողմանէ , ինչպէս յայտնի է , ամենեւին արգեք մը չըկայ ներելու Շլիմանի ունեցած կարծեացը , որով կը հաւատայ տեսած ըլլալ 'ի մօտոյ վեհափառ դէմքն Արքայից Արքային :

Իրաւ է որ 'ի պատմութեան , ինչպէս նաև քննադատութեան մէջ , սկեպտականութիւնն երբեմն լաւ կողմն ալ կըրնայ ունենալ . բայց շատ անգամ հաւատքը աւելի կը զօրէ : Վոլֆ և Մոմսըն գերմանացի իմաստնոց դրութեանն հետեւող սկեպտիկեան մը յաւիտեան Միկէէնքի պեղմանց չէր ձեռնարկեր՝ Ագամեմնոնի գերեզմանն գտնելու յուսով , որ գոյութիւն ունեցած չէր . որով երբեք Միջնաբերդին գանձուն գիւտը պիտի չըկարենար ընել . մինչդեռ

Շլիման ըսնէր նաև կուրացեալ իրեն հոմերական սիրովը , յունական արուեստին նկատմամբ այսպիսի ամենամեծ գիւտ մը ըրաւ : Ոմանք կը ծիծաղին իւրեն գիւրահաւան բնութեան վրայ . այո , Շլիման թերևս քիչ մը գիւրահաւան է , բայց մտածենք որ գիւրահաւան ըլլալու հազար ու մէկ պատճառ ունի , վասն զի երբ մէկն այնպիսի ստորին վիճակէ մը կը հասնի բարձրագոյն վիճակի մը , երբ մէկը կ'անցնի ընկերական պայմանաց բոլոր աստիճաններէն , երբ 14 տարեկան անգրագէտ պատանեակն , համեմատաբարութենէ ճամբայ ելլելով՝ բազմալեզու գիտնական մը կը դառնայ , երբ մէկը մուրացկանութեամբ ապրելով՝ յետոյ միջոններու տէր կ'ըլլայ . երբ մէկն յետ վաճառելու աղ պղպեղ , կը պարգևէ տէրութեան մը թագաւորապայել գանձ , և բոլոր աշխարհիս անդին պարգև մը , վերջապէս երբ մէկը այսպիսի զարմանալեօք լի՝ առասպելանման կեանք մը վարէ , այնուհետև արդեօք կարելի չէ հաւատք ընծայել իշխականին պատմութեանցն , որոնք աւելի ճշմարտանման են քան զնախասացեալսն , արդեօք կարելի չէ ալ չտարակուսիլ Ոգիսեւսի արկածներուն վրայ , յետ որոյ որ մէկը նոր Ոգիսականի մը գիւցազն եղեր է :

1 Պ . Հենրիկոս Շլիմանի վարուցը վրայ տեղեկութիւն խնդրողք՝ կրնան գտնել զայն Բաղմազիպիս 1874 տարւոյն՝ վերջին եռամսեայ Պրակին մէջ , էջ 348 :